


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԱԴ  
ՀՆՁԱՆ

ՔԱԶԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ԿԱՆԱՀ ՇՆԹԱՆ



Դ 1/2795



Հ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ  
Վ Ր Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ  
Ծ Ր Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

Ap 2  
9-89

9— $\frac{0743 \ (240)}{701 \ (01) \ 73}$  112, 73 «8»

Ժողովածուն ամփոփում է հեղինակի վերջին տարիներին գրած բանաստեղծությունները, բալադները, պոեմները, որոնց մեջ արտացոլված են մեր օրերի մարդու խոհերն ու ապրումները նրա մտորումները կյանքի, բնության, աշխատանքի և սիրո մասին:

КАДЖИК ГУРГЕНОВИЧ ГРИГОРЯН

**ЗЕЛЕНЫЕ ПОЛЯ**

(стихи)

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван, 1973

# ՊՈԵՄ, ԲԱԼԼԱԴՆԵՐ, ԼԵԳԵՆԴՆԵՐ

---

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

(Լիրիկական պոեմ)

Նա վշտահար մեռավ, մեռավ որբ ու անտուն,  
Ծուրթին՝ խոսուն հնչունն հայրենախոս երգի,  
Մրտում՝ չերգված երգեր, անտունիներ տրտում,  
Մպեղանի դարձած հայոց խորունկ վերքին:  
Նա վշտահար մեռավ... բայց հանճարեղ հոգին,  
Երբ զգում էր կյանքը այնպես, ինչպես նա կար,  
Երկնեց խորունկ խոհեր, որ փոխվեցին երգի  
Եվ դյութեցին աշխարհ:  
Անհույս սրտով հյուսեց հույսի հորովելներ,  
Մտքով կուրծքը հերկեց հայրենական հողի,  
Ուր գեղջուկն էր տնքում՝ եզին դարձած ընկեր,  
Ու քրտինքով քարից քամում հացն իր լեղի:  
Մանկան սիրով սիրեց արտը հայրենական,  
Ուկնդրեց երգը ցորյանների հասուն,  
Ու հնձվորին տեսավ, որ արշալույսն հագած՝  
Հունձն էր անում արտի,  
Եվ իր վշտի մասին լասերի հետ խոսում...  
Նա վշտահար մեռավ, բայց ուղեղում նրա

Երբ դեռ չէր մթագնել պղտորված շիթը արյան,  
Հոգու աշքով տեսավ հայրենիքի վրա  
Ոսկեճանանշ արևն իր երազած գարնան:  
Հուսադրվեց,  
Երգեց,  
Եվ երգերը գնդուն  
Կարկաշեցին որպես աղբյուրները ալմաստ  
Մերթ վրդովված՝ ինչպես փրփրաբերան ջանդուն,  
Մերթ մեղմախոս, խոհուն, իբրև անմեռ Արագ,  
Երգեց... Սակայն երգով վերքը քէշ է բուժվում,  
Ու չի կարող մարդը երգել կյանքում անվերջ,  
Երգից հետո՝ սիրտը ցավերն էին խուժում,  
Իբրև շիկնած շամփուր խրվում խոցերի մեջ:  
Մորմոքում էր սիրտը, և նա նորից, նորից  
Հայոց ջարդն ու զոհված լավերին էր հիշում,  
Եվ անպատում մի ահ, մի հին սարսուռ խորին  
Կերպարանք էր առնում աշքերի դեմ՝ մուժում:  
Նա տեսնում էր դեմքը այդ տեսիլքի անգու,  
Որը առաջ պարզած սուսերակիր մի ձեռք,  
Մանկան արյուն խմող Համիդների կամքով,  
Թափառում էր հայոց եղերքներից եղերք,  
Ու զլխատում հայի ամեն երազ ու երգ:  
Եվ կաշկանդված ասես սառն հայացքով օձի,  
Նա նայում էր անթարթ տեսիլքներին տարտամ՝  
Տեսնում զոհված կյանքեր,  
Ու շախչախված գանգեր,  
Որոնք, ինչպես արև, գիտեն ճառագել,  
Հորդում էին խոհեր ու երազանք վարդի,

Երբ ոսոխազ նրանց պատյանը շէր ջարդել:  
Նա նայում էր անթարթ, և իր աշքի առաջ,  
Մեռած ընկերները կանգնում էին շարքի,  
Փշրած քնարները ձեռքերի մեջ առած  
Ճարտար ճակատներին՝ դափնեպսակ փառքի:  
Վարուժանն էր նորից երգում պայծառ հիմներ,  
Աշքերի մեջ խոհուն՝ վիշտ ու կյանքի կարոտ,  
Երգի սրով խոցում ոսոխներին իր նեռ,  
Թափում նրանց գլխին նախատինք ու ամոթ:  
Եվ հառնում է իր դեմ ըմբոստ Սիամանթոն՝  
Ծիածանված հոգու երազներով իր բյուր,  
Երգում կյանք ու կոիվ սիրահարի խանդով,  
Սրտում սիրո արև, վարդեր գարնանաբույր:  
Եվ Զոհրապն էր այնժամ իր երգերը զինում՝  
Բնդղեմ մոռացության,  
Ժամանակի,  
Ժանդի,  
Եվ որոնց մեջ հյուզեն շնչահեղձ էր լինում,  
Այնքան խիտ էր ու սեղմ պատկերումը կյանքի:  
Գալիս էին հետո ուրիշ անմեղ զոհեր,  
Զհագեցած կյանքի ծարավն աշքերի մեջ,  
Եվ ձեռքերը պարզած մոայլ երկինքն ի վեր՝  
Ուրվակական կանչում՝  
Վրեժ,  
Մորմոքում էր հոգին, և այնտեղից գունատ  
Արտասուքն էր թափվում խոփվ մորուքն ի վար,  
Բոռնցքվում էր ձեռքը ցասումնալի ու վհատ,  
Զեռք, որ ստեղծված էր հնչյունների համար:

Նա լալիս էր անվերջ ու վշտակիր սրտով  
Բախտն էր սգում իր հեգ ու տառապած ազդի,  
Նրա անմեղ որդոց,  
Որոնք օտարների բանսարկությամբ, ստով,  
Շղթա էին կրում իրենց հյուծված բազկին:  
Ու քայլում էր դանդաղ ուղտը ժամանակի,  
Սապատներին առած ոճիր, եղեռն ու մահ,  
Որի հետքով սովոն էր ճոճում իր գերանդին  
Եվ հունձն անում անահ:  
Եվ վշտերից, ցավից, տառապանքից հոգնած՝  
Կոմիտասն էր տրտում մեղեդիներ երգում,  
Ծխում էին սրտում երազները հանգած,  
Որպես ցավի մորմոք՝ անբուժելի վերքում: -  
Երգում էր... Եվ մի օր (թող այդ օրը շգար),  
Հայոց բախտի երգը, իր «Անտունին» երգեց,  
Այնպես երգեց, ասես թե չէր երգել երկար,  
Եվ ամեն մի սրտում վշտի մի արտ հերկեց:  
Դուրս հորդեցին շուրթից ելաչներն հնչեղ,  
Մավալվեցին, հանգան զմայլանքով անանց,  
Ամեն հնչյուն երգի ոգի առավ, շնչեց,  
Երգեց, և երբ մարեց վերջին հունչը երգի,  
Նա վրդովված հոգով,  
Դաշնամուրի քնքուշ ստեղները ջարդեց,  
Որ էլ երբեք ք, երբեք ք, երբեք ք շնվագի...

— — — — — — — — —

Ու տարիներ անցան... Նա ափերում օտար

Իր օրերն էր մաշում, իր խոհերը խեղված,  
Վշտի պահին ժպտում, լալիս առանց պատճառ,  
Դեռ կենդանի՝ մեռած:  
Զէին հնազանդվում հնչունները նրան,  
Ներշնչումն էր հոգում փոխվում մղձավանջի,  
Խոհն էր ուղեղի մեջ վառվում բոցի նման,  
Որ շարշարի, տանջի:  
Ու տարիներ անցան, և օրերից մի օր  
Մահվան տիսուր բոթը կրկին թևեր առավ,  
Սուրաց աշխարհով մեկ և հայերին բոլոր  
Կոմիտասի մահվան ցավոտ լուրը տարավ:  
Ու թեածեց վիշտը, լացեց ամեն մի հայ,  
Որ զրկանք էր տեսել, տեսել արյուն, ավեր,  
Խսկ աշխարհում անվիշտ և ոչ մի հայ շկար:  
Նա վշտաբեկ մեռավ, ու չիմացավ երբեք,  
Որ աշխարհն էր փոխվել, փոխվել կյանքն ու մարդիկ,  
Որ իր հայրենիքում հնչում են նոր երգեր,  
Եվ ուրախ է կյանքը, ու անամպ է արփին:  
Ու շիմացավ երբեք, որ մաճկալը ուրախ՝  
Հանդում էլ չի երգում հորովելներ տրտում,  
Որ մեր անդարձ վշտի պատկերներն են նրանք,  
Եվ անտունին տուն է գտել ամեն սրտում:  
Նա անսփոփ մեռավ... Բայց թե Կոմիտասն էր,  
Մահվան մեջ էլ անգամ պիտի շառներ դադար  
Մինչև իր կարոտած հայրենիքը լհասներ,  
Որի հողը նրան պիտի լիներ սատար:

Հայն այդ գիտեր հաստատ, և երջանիկ մի օր,  
Նրա աճյունն առած՝ անցավ ցամաք ու ծով:  
Բերեց նրան երկիր, որ միշտ մնա իր մոտ,  
Հպարտանա իր այդ անզուգական գանձով:  
Եվ ձեռքերին առած բերեց իբրև նշխար,  
Իբրև բեկոր ու սրբազն մասունք,  
Որն իր երգի ուժով թովել էր ողջ աշխարհ,  
Ու հանգում է հիմա Կոմիտասը մեղ մոտ,  
Նրա քունն է հսկում մահարձանը քարե,  
Մրտում՝ շերգած երգեր ու ամոքված կարոտ,  
Շուրջը՝ անանց գարուն, թովիշ վարդեր, արև:  
Հավերժական բախտով հայն է երգում, խնդում,  
Զեռքին առած իր նոր երջանկության թասը,  
Եվ ապրում է մեղ հետ ու ամենքիս սրտում  
Մեր հանճարեղ, բարի, անմահ Կոմիտասը: